

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

մարզի գյուղի դպրոցի

ԵՎ

ԵՐԵՎԱՆԻ «ՄԻՏԻԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ

ՄԻՋԵՎ

«...» սեպտեմբեր 2012թ.

ք. Երևան

Կրթահամալիրում իրականացվում են կրթահամալիրի ուսուցիչների մշակած և ՀՀ ԿԳ նախարարության հաստատած «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեղիակրթություն» հեղինակային կրթական ծրագրերը:

Հեղինակային կրթական ծրագրերը պետական դրամական աջակցություն են ստանում «Փորձարարական մանկավարժության ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի համար կրթահամալիրի և ԿԳ նախարարության միջև կնքվող պետական աջակցության ամենամյա պայմանագրով:

Պետական աջակցության պայմանագրով նախատեսված է հեղինակային կրթական ծրագրերի տեղայնացում, փորձի փոխանցում, այդ նպատակով հանրապետությունում գործընկեր դպրոցների ցանցի ստեղծում, դպրոցների ղեկավարների և դասավանդողների վերապատրաստում:

մարզի գյուղի ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Դպրոց) ի դեմս տնօրենի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից և ՀՀ Կրթության և գիտության նախարարության՝ Երևանի «Միտիթար Սեքստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կրթահամալիր) ի դեմս տնօրեն Աշոտ Բլեյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը գործընկերության մասին:

ՆՊԱՏԱԿԸ

Հեղինակային կրթական ծրագրի փորձի հիման վրա Դպրոցի արդիականացման ծրագրի մշակում և իրականացման կազմակերպում:

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Կրթահամալիրի կողմից Դպրոցի մանկավարժական աշխատողների վերապատրաստում հեղինակային կրթական ծրագրով
- 1.2. Կրթահամալիրի կողմից Դպրոցի զարգացման ծրագրի մշակման աջակցություն

- 1.3. Դպրոցում տեխնոլոգիական հանրակրթության կազմակերպման Կրթահամալիրի փորձի տեղայնացում
- 1.4. Թվային միջոցների ամբողջական կիրառում Դպրոցի սովորողի և ուսուցչի կողմից դպրոցում և տանը
- 1.5. Կրթահամալիրում իրականացվող հեռավար ուսուցման ծրագրերի միջոցով Դպրոցի սովորողների օժտվածության զարգացման, անհատական ուսուցման կազմակերպում
- 1.6. Սովորողների և ուսուցիչների ուսումնական աշխատանքի միջոցով գյուղի, գյուղական միջավայրի՝ հուշարձանների, բնության, սովորույթների, կենցաղի, լեզվի, պատմության, ավանդույթների, մարդկանց, խնդիրների ներկայացում համացանցում
- 1.7. Համաձայնագրից բխող համատեղ այլ աշխատանք:

## 2. Կողմերի պարտավորությունները

2.1 Դպրոցի սովորողների և ուսուցիչների մասնակցություն կրթահամալիրում կազմակերպվող ուսումնական ճամբարներին, ստուգատեսներին, մեդիաօլիմպիադաներին, Հանրակրթական Դիջիթեքին, ստեղծագործական հավաքներին

2.2 Համատեղ ուսումնական ճամբարների, ուսումնական հայրենագիտական, էկոլոգիական ճամփորդությունների կազմակերպում

2.3 Դպրոցի ուսուցիչների և սովորողների կողմից Կրթահամալիրի mskh.am կայքի, մեդիագրադրանի օգտագործում ուսումնական աշխատանքի կազմակերպման և մասնագիտական զարգացման նպատակներով

2.4 Դպրոցի կայքի ստեղծում և Դպրոցի սովորողների, ուսուցիչների միջոցով դրա սպասարկում և պահպանում

2.5 Կրթահամալիրի մանկավարժական աշխատողների կողմից հեղինակային կրթական ծրագրով վերապատրաստման մոդուլների մշակում և Դպրոցի մանկավարժական աշխատողների վերապատրաստումների իրականացում

2.4 Համատեղ առցանց քննարկումների, տեսա-կոնֆերանսների կազմակերպում

2.5 Դպրոցի ստեղծագործող մանկավարժական աշխատողների, սովորողների հոդվածների հրապարակում «Դպիր», «Լուսաստղ», «Պարտեզ» էլեկտրոնային ամսագրերում:

## 3. Եզրափակիչ դրույթներ

3.1. Սույն համաձայնագիրը կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

3.2. Համաձայնագրից բխող աշխատանքների և գործառույթների իրականացումը արտացոլվում է կողմերի տարեկան գործողությունների (միջոցառումների) ծրագրում, որի հիման վրա կազմվում են կողմերի համար ֆինանսական պարտավորություններ առաջացնող համաձայնագրեր:

3.3. Սույն համաձայնագիրը կազմվել և ստորագրվել է երկու օրինակով, հայերեն լեզվով: Կողմերից յուրաքանչյուրը ստանում է մեկ օրինակ:

3.4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է ստորագրման օրվանից հինգ տարի ժամկետով և կարող է երկարաձգվել կողմերի համաձայնությամբ:

Կողմերը պարտավորվում են համատեղ գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություն ներկայացնել կողմերի ղեկավար մարմիններին:

3.5. Սույն համաձայնագիրը կարող է լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին առնվազն երկու ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

3.6. Կողմերի միջև վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները.

	<p>ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ</p> <p>0064, Երևան, Ա. Բաբաջանյան 25 www.mskh.am info@mskh.am</p> <p>ՏՆՕՐԵՆ՝ ԱՇՈՏ ԲԼԵՅԱՆ</p>
--	---